

покоится прахъ
Артемиевны
селъ
Фокшаньянъ
бря 1854 г.
ештахъ
сконч бря 1903 г.
въ Орге евѣ.

...ПОКОИТСЯ ПРАХЪ / ...АРТЕМИЕВНЫ/... СЕЛЪ / ФОКШАНЬЯНЪ/ ...БРЯ 1854 Г./ ...ЕШТАХЪ/ СКОНЧ. 21 ...БРЯ 1903Г. / ВЪ ОРГЕЕВѢ

Մանոթ. Քաղաքացիական պատերազմի հերոս Սերգեյ Լազոն ծնվել է Օրգեև քաղաքից 8 կմ հեռավորությամբ գտնվող Պյատրի (այժմ՝ Լազո) գյուղում: Նրա մասին եղած գրքերում նշվում է, որ Լազոյի ընտանիքը բարեկամական կապերի մեջ է եղել Ֆոկշանյան մեծահարուստ կալվածատերերի հետ: Կարելի է ենթադրել, որ Ֆոկշանյանները հայեր են, թեև Սերգեյ Լազոյի մասին եղած գրքերում նրանք ներկայացված են իբրև մոլդովացիներ (մոլդովներ) Ֆոկշանյանու ազգանուններով:

ԲԵԼՑԻ (ԲԵԼՑ, ԲԵԼԸՑ)

Հայկական ոչ ստվար գաղթօջախ է ունեցել Քիշնևից հյուսիս-արևելք գտնվող Բելցի քաղաքը, որի հայ բնակիչների թիվը տարբեր տարիներին հասել է մինչև 700 մարդու[21]: Մ.Բժշկյանի այցելության ժամանակ այստեղ ապրել են ընդամենը տասը հայ ընտանիք[22], որոնք զբաղվել են վաճառականությամբ, երկրագործությամբ և արհեստներով: Քաղաքի երկրագիտական թանգարանի ֆոնդերում պահպանված գրավոր տեղեկությունների համաձայն՝ հայոց հին եկեղեցին՝ Ս.Նիկողայոսը, կառուցվել է 1795 թ. ռումին բոյար, ծագումով հույն Գեորգի Պանաիտի ծախսով: Նախագծի հեղինակն է եղել գալիցիացի ճարտարապետ Վեյսմանը: Արևելյան և արևմտյան կողմերից կառույցն ունեցել է քանդակազարդ ճակտոններ, ներքուստ՝ հարավային և հյուսիսային

---

21 Ա.Խ.Թորամանյան, նշվ., աշխ., էջ 26:

22 Մ.Բժշկյան, էջ 188:

խորանները կենտրոնականից բաժանվել են որմնասյուներով: Առանձնապես աչքի է ընկել իկոնոստասը, որի հեղինակն է նկարիչ Եվստավինը: 1804 թ. Ս.Նիկողայոսը օծվում է ուղղափառ ծեսով և տրվում մոլդավացիներին[23]: Առաջանում է լուսավորչադավան հայոց նոր եկեղեցի կառուցելու խնդիրը: Ապագա տաճարի նախագիծը հանձնարարվում է կազմել ճարտարապետ Ա. Կրասնոսելսկուն, որը հմտորեն օգտագործում է հայ ճարտարապետությանը հարազատ հորինվածքային մանրամասներ: 1909 թ. կաթողիկոս Մատթեոս Իզմիրլյանի միջնորդությամբ Նոր-Նախիջևան-Բեսարաբիայի թեմական առաջնորդ Ներսես արքեպիսկոպոս Խուդավերդյանը իրավունք է ստանում կառուցելու Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, որի հիմնադրումը տեղի է ունենում 1910 թ. օգոստոսի 24-ին, ավարտը՝ 1912 թ. հոկտեմբերի 26-ին[24]: Նպաստավորողները եղել են Հակոբ Գրիգորի Մարգարյանը և Դմիտրի ու Մկրտիչ Լուսախանյանները: Եկեղեցի կառուցելու համար հողամաս է տրամադրել Մարիամ Ֆոկշանյանը: Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին գտնվում է քաղաքի կենտրոնում՝ «Օկտյաբր» հյուրանոցի մոտ, ունի տիրապետող դիրք, երկգմբեթ է՝ վեր խոյացող սրածայր վեղարներով: Ճարտարապետական մտահղացմամբ հիշեցնում է Էջմիածնի Մայր տաճարը[25]:

Մոլդովայի Նախարարների խորհրդի 1971 թ. N.349 որոշմամբ Բելցիի հայոց եկեղեցին վերցված է պետական հսկողության: Նրա սրահները մեր այցի ժամանակ տրամադրված էին քաղաքային մարզադպրոցին, որի տնօրինությունը կատարել է զգալի փոփոխություններ: Տաճարի հատակի տակ նկուղահարկ-դամբարանատունն է, հյուսիսային միակ մուտքն այժմ փակված է քարուկրով: Այստեղ, խորշերի մեջ դրված են Մոլդովայի ականավոր հայերից մի քանիսի ցինկապատ դագաղները՝ մարմարակերտ արձանագրված ցուցատախտակներով:Բելցիի քաղխորհրդի նախագահի տեղակալ Ի.Ֆ. Կլիմովիչի կարգադրությամբ որոշվեց բացել դամբարանատան արտաքին մուտքը, սակայն անհնար եղավ ամրաշաղտխ շարվածքը քանդել, ուստի նպատակահարմար գտնվեց ներս մտնել ժամատան հատակից, որի տախտակամածի տակ, ներքուստ կար մի փոքրիկ անցք: Պատանի բռնցքամարտիկների դպրոցի ուսմասվար Նիկոլայ Իվանովիչի աջակցությամբ ներս սողոսկեցինք շինարարական աղբակույտով լեցուն նկուղահարկ. ձեռքի լապտերների միջոցով հայտնաբերեցինք ընդամենը երեք սալաքար և մեկ ցինկապատ դագաղ՝ որմնախորշի մեջ: Ահա դրանց վիմագրությունները.

736. Սալաքար, *սպիտակ մարմարից, նախկին տեղն անհայտ. վրան մակաղրված է 5 տող.*

ЗДѢСЬ ПОКОИТСЯ ПРАХЪ/ ИВАНА ХАРИТОНОВИЧА/ ЛУСАХАНОВИЧА./ СКОНЧАВШ. НА 73 Г. ЖИЗНИ ДЕКАБРЯ 22 ДНЯ 1881 Г.

737. Սալաքար, *սև մարմարից, ոսկեջրած վիմագրությամբ: Ունի հայերեն 2 և ռուսերեն 7 տող.*

ԳՐԻԳՈՐ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ/ ԿԱՒՆԱ

---

23 Ա.Խ.Թորամանյան. էջ 26: Հմմտ. А.Ящук, նշվ., աշխ., էջ 160:

24 Նույն տեղում. էջ 26:

25 Հուշարձանի ճարտարապետական հորինվածքի վերլուծությունը մանրամասն տե՛ս Ա.Խ. Թորամանյանի նշված աշխատության 27-30 էջերում:

ЗДѢСЬ ПОКОИТСЯ ПРАХЪ/ ГРИГОРiЯ ХАРИТОНОВИЧА/ ГАИНА,/ СКОНЧАВШЕГОСЯ 7.V.1923/ НА 52 ГОДУ ЖИЗНИ. МИР ПРАХУ ТВОЕМУ/ ДОРОГОЙ МУЖЪ [И] ОТЕЦЪ.

738. Սալաքար, սպիտակ մարմարից, նախկին տեղն անհայտ: Ընկած է նախորդի կողքին: Վրան՝ ռուսերեն 5 տող.

ЗДѢСЬ ПОКОИТСЯ ПРАХЪ/ ЗЕМЛЕВЛАДЕЛЬЦА/ АГОПА САРКИЗОВИЧА ПОПОВИЧА. РОД. 9 АПРѢЛЯ 1860 Г. СКОНЧ. 18 НОЯБРЯ 1922 Г.

739. Եկեղեցու զանգակատան ձեղնահարկում ընկած ձուլածո զանգի վրա՝ զարգանախշերով 5 տող.

МОСКВА. ЗАВОДЪ П.Н.ФИНЛЯНДСКАГО./ ВѢС 25 ПУД.-ФУН./ ПОЖЕРТВОВАНЪ ХРИСТОФОРОМЪ/ ГРИГОРЬЕВИЧЕМ НЕГРУШЪ 16.IX.1912 Г./ БЕЛЬЦЫ.

ԲԵԼՑԻԻ ՀԻՇԱՏԱԿԱԳՐԱՅԻՆ ՎԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՔԻՇՆԵՎՅԱՆ ԳԵՐԵԶՄԱՆՈՑ

Բելցիի հայկական գերեզմանոցն այժմ գոյություն չունի: Նրա տեղում կառուցված է Վ.Ի.Լենինի անվան գործարանի հսկայածավալ մասնաշենքը: Մի շարք տապանաքարեր տեղափոխված են՝ քաղաքի ցարդ գործող գերեզմանոցը, մասամբ նաև Հրեական գերեզմանոց: Վիմագրական արշավախմբի հայտնաբերած արձանագրությունները հետևյալներն են.

740. Կոթող, սպիտակ մարմարից, գլխիվայր շրջված: Միջին պատվանդանին՝ 7 տող.



Ի ՏԱՊԱՆ ԱՍՏ ՀԱՆԳՋԻ/ ԳԱԲՐԻԷԼ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ /ԼՈՒՔՈՎ./ ԾԸՆԵԱԼ 1817 ԱՄԻ, ՎԱԽՃ./ Ի ՀԱՍԱԿԻ 67 ԱՄԱՑ/ 1882 ԱՄԻ ՕԳՈՍՏ. 6./ Ի ՊԵԼՑ:

Հակառակ կողմին՝

ЗДѢСЬ ПОКОИТСЯ/ ГАВРIИЛЪ ХРИСТОФОРОВИЧЪ. /ЛУКОВЪ,/ РОДИВШIЙСЯ В 1882 Г. ОКТЯБРЯ 6 ДНЯ 67 ЛѢТЪ ОТЪ РОДУ./ ВЪ Г. БѢЛЬЦЫ.

741. Կոթող, սև մարմարից, վերնամասում՝ 7 տող.

ЗДѢСЬ ПОКОИТСЯ РАБЪ БОЖІЙ/ СИМОНЪ ХРИСТОФОРОВИЧЪ/ АЛЛАЧЪ./ РОД. В Г. СУЧАВѢ 11 НОЯБРЯ 1835 ГОДА,/ СКОНЧ. 23 ДЕКАБРЯ 1900 ГОДА./ МИРЪ ПРАХУ ТВОЕМУ....

742. Տապանաքար, գորշավուն ավազաքարից, մեջտեղից երկաթալարով կապված: Գտնվում է տեղափոխված տապանաքարերի կույտի մեջ: Վրան՝ 10 տող.

Ն◯ՔՈՅ ԱՅՍՄ ՇԱ
ՀԱՆԻ ՆՆՋԷՄԱՐՄԻՆՆ
ԻՑ ՕՀԱՆԱԴՐԱՆԽՈԼ
ԵԱՆՑԻՆ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ
ԲԵՐՈՒՋԻԿ ԱԼՍՏՈՒԱԾԱՏՐՈՑ
ՄՕՑՍԷԱՆ ԾՆԵԱԼ Է Ի
10 ՕԳՈՍՏՈՍԻ 1834 ԱՄԻ: Ե
ՓՈԽԵԱԼ ԱՌ ԱԾ Ի 3
ՀԿՏԵՄԲԵՐԻ 1864 ԱՄԻ: Ի
ՊԵԼՑ ՔԱՂԱՔԻ:

ՆԵՐՔՈՑ ԱՅՍՄ ՏԱ/ՊԱՆԻ ՆՆՋԷ ՄԱՐՄԻՆՆ/ ԿՈՂԱԿԻՑ ՕՀԱՆԱ ԴՐԱՆԽՈԼ/ԵԱՆՑԻՆ ՀԱՆԳՈՒ-ՑԵԱԼ/ ԲԵՐՈՒՋԻԿ ԱԼՍՏՈՒԱԾԱՏ-ՐՈՑ/ ՄՕՑՍԷԱՆ. ԾՆԵԱԼ Է Ի 10 ՕԳՈՍՏՈՍԻ 1834 ԱՄԻ ԵՒ/ ՓՈ-ԽԵԱԼ ԱՌ ԱԾ Ի 3/ ՀՈԿՏ-ԵՄԲԵՐԻ 1864 ԱՄԻ Ի/ ՊԵԼՑ ՔԱՂԱՔԻ:

743. Կոթող, սպիտակ մարմարից, գեղաքանդակ: Վրան՝ 4 տող.

ЗДѢСЬ ПОКОИТСЯ ПРАХЪ/ ОСМОЛОВСКОЙ,/ УРОЖДЕННОЙ КАТАРЖИ/ И СКОНЧАВШЕЙСЯ 9 ФЕВРАЛЯ 1872 ГОДА НА 64 -МЪ ГОДУ ОТЪ РОЖДЕНІЯ.

744. Կոթող, սպիտակ մարմարից: Երևացող մասին՝ 8 տող.

ЗДѢСЬ/ ПОКОИТСЯ ПРАХЪ/ ДОРОГОЙ ТРУЖЕНИЦЫ/ ЗИНАИДЫ НЕГРУШЪ,/ ПОКОНЧИВШЕЙ, СЧЕТЫ/ СЪ СИМЪ МИРОМ 20 МАРТА 1906 Г./ ПРОЖИВШИ 52 ГОДА.

Հրեական գերեզմանոց

Գտնվում է Արտյոմովսկի կոչվող հանգստարանի մոտ, սարալանջին: Հայկական Քիշնևյան գերեզմանոցից այստեղ են բերված հետևյալ հուշակոթողները.

745. Տապանաքար, գորշ կրաքարից: Վրան՝ 4 տող.

ЗДѢСЬ ПОКОИТСЯ ПРАХЪ/ ЕЛИЗАВЕТЫ ИВАНОВНЫ/ ТЕВАНОВЬ./ СКОНЧАЛАСЬ 3 ФЕВР 18...

746. Կոթող, սև գրանիտից: Վրան՝ 6 տող.

ЗДѢСЬ ПОКОИТСЯ ПРАХЪ/ МАРІИ ИВАНОВНЫ/ СТЕПАНОВНОЙ,/ УРОЖД. ЧЕРКЕСЪ./ РОД. 3 іюля 1839, СКОНЧ. 24 АПР. 1909г.

ԳՐԻԳՈՐԻՈՊՈԼ

Գրիգորիոպոլը իբրև հայաքաղաք պաշտոնապես հռչակվել է Եկատերինա Բ կայսրուհու 1792 թ. հուլիսի 25-ին հրովարտակով, սակայն հայ ազգաբնակչությունն այստեղ բնակություն է հաստատել ավելի վաղ ժամանակներից (տե՛ս արձ. N 767 և այլն): Մ. Բժշկյանի վկայությամբ Դուրասարի մոտ հիմնադրված «Գրիգորիպոլ է քաղաք Հայոց և ի մեծ մասն բնակչաց են հայք, եկեալ յԻսմայիլէ, ի Քիլիոյ, ի Ղաւշանէ և Ռաշքովայ և կէս մի յաւելեալ են անդ Ռուսաց և Մոլտովանից»[26]: Սկզբնապես այստեղ ապրել են 900 հայ ընտանիք, 4444 մարդ[27], (1790 թ.) օժտված են եղել ինքնավարությամբ. ունեցել են իրենց դատարանը՝ հինգ դատավորներով: 1799թ. ռուսական Պավել կայսրը գրիգորիոպոլցի հայերին շնորհում է մի շարք արտոնություններ և 30000 դեսյատին հող: Ապա գաղութն աստիճանաբար քայքայվում է: 1820-ական թթ. այստեղ բնակվում էին 350 հայ ընտանիք, որոնք ունեցել են 4 եկեղեցի՝ ս. Կատերինա, ս. Լուսավորիչ, ս. Խաչ և ս. Կոստաս-Պետրոս[28]:

Գրիգորիոպոլում գործել է հայ օրիորդաց դպրոցը[29], դպրատունը: Հայկական պատմական հուշարձաններից այժմ պահպանվել են արտաքուստ և ներքուստ ձևափոխված եկեղեցիներից մեկը՝ ս. Աստվածածինը (Մարքսի փողոցի վրա) և գերեզմանատներ, որոնք կոչվում են Իզմայիլյան, Ղավշանյան և Քիլիական: Շրջագայության ժամանակ մեզ մեծապես օժանդակեց բնիկ գրիգորիոպոլցի հայուհի Ալեքսանդրա Գեորգևնա Խորասանյանը (ըստ ամուսնու ազգանվան՝ Գոլուբինսկայա), որին հայտնում ենք մեր սրտագին շնորհակալությունը:

Ա. ԻԶՄԱՅԻԼՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՐԵԶՄԱՆՈՑ

747. Տապանաքար, սպիտակ մարմարից, քանդակված նախշերով, ստորին մասում՝ երեք խորաններ և ծաղկամաններ: Աջ մասը կոտրված է: Վրան՝ 17 տող.

---

26 Մ. Բժշկյան, էջ 185:

27 Ж. Ананян, Рецензия на книгу В. М. Кобузана "Заселение Новороссии в XVIII- перв. полов.XIX в.", М. 1976. См. ИФЖ, 1979,N 4, с. 243-246.

28 Ж. Ананян, Страничка из истории армянского женского образования в России. "Вестник общ. наук АН Арм. ССР", 1972, N 5, с. 59-65.Մարտարապետական հուշարձանների նկարագիրը տե՛ս Ա. Թորամանյան. նշվ. աշխ., էջ 40:

29 Այս դպրոցի մասին հոդված է գրել գրող Մարիետա Ծահինյանի պապը՝ Դավիթ ավ. քահանա Ծահինյանը (տե՛ս «Օրիորդաց հոգևոր դպրոց ի Գրիգորիոպոլ», «Արարատ», 1871, էջ 397-398):